

2019

Հայաստանի
գեղարվեստի
պետական ակադեմիա

[ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 2019-2022]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....	2
2. Հետազոտության համատեքստը.....	4
3. Հետազոտության առաջնահերթությունները.....	6
4. Հետազոտական միջավայրը.....	8
5. Հետազոտության ռազմավարության մշատադիտարկումն ու բարելավումը.....	11
6. Հավելվածներ	
✦ Հետազոտության իրականացման մոտեցումները, կատարողականի ցուցիչները և գործողությունների պլանը 2019-2022թթ.....	12
✦ Առկա իրավիճակի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների ու հնարավոր վտանգների վերլուծություն.....	14
✦ Համակարգում` Հետազոտական կենտրոն.....	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան (այսուհետ՝ ՀԳՊԱ) առանձնացնում է հետազոտությունը՝ որպես գերակա ուղղություն՝ ռազմավարական նպատակներում սահմանելով հետազոտական ոլորտի զարգացումը որպես առաջնահերթություն: Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով արվեստաբանության, կերպարվեստի, կիրառական արվեստի ու դիզայնի ոլորտներում հետազոտության զարգացումները՝ ՀԳՊԱ-ն սահմանել է հետազոտության ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն), որն էլ լավագույնս արտացոլում է բուհի 2019-2022թթ. հետազոտության զարգացման հեռանկարները:

ՀԳՊԱ-ն փաստում է, որ հաջող դասավանդմանը մեծապես նպաստում են ոլորտում տեղի ունեցող հետազոտությունները, որոնք խթանում են նաև բուհի դասավանդման բարելավումն ու կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

ՀԳՊԱ-ն խրախուսում է հետազոտության զարգացումը, քանի որ վերջինս՝

- ✚ նպաստում է բուհի հեղինակության մեծացմանը՝ ուղղակիորեն ազդելով բուհի գործունեության բարելավմանն ու եզակի ավանդ ունենալով արվեստաբանության, կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտներում հետազոտության առաջընթացին,
- ✚ նորարարական մոտեցումներով և գաղափարներով սերնդին հնարավորություն է ընձեռում կարևոր ներդրում ունենալ ազգային մտքի, մշակույթի, տնտեսության, տեխնոլոգիայի և արդյունաբերության զարգացման մեջ՝ մատուցելով հասարակությանը արժեքավոր ծառայություն,
- ✚ ստեղծում է միջավայր ու հավասար պայմաններ, որոնք գրավիչ են երիտասարդ հետազոտողների համար, նպաստում են որակյալ մասնագետների ու ղեկավարների ներգրավմանը հետազոտական գործունեության մեջ,
- ✚ ապահովում է հավելյալ նյութական և ֆինանսական միջոցների ձեռքբերում՝ զարգացնելով հետազոտական պոտենցիալը, որոնք անհրաժեշտ են ռազմավարական նպատակների կայուն զարգացման համար,
- ✚ ապահովում է համագործակցության նոր հնարավորություններ՝ ստեղծելով հետազոտողների ու պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում անհրաժեշտ պայմաններ փորձի փոխանակման և կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար:

ՀԳՊԱ-ն արվեստաբանության, կերպարվեստի, կիրառական արվեստի ու դիզայնի ոլորտներում հետազոտությունը սահմանում է որպես ստեղծագործական ուսումնասիրություն, որը հանգեցնում է նոր գաղափարների և հասկացությունների առաջացմանը: Այն կարելի է նկարագրել որպես իրավիճակի կամ խնդրի համակարգային հետաքննություն, որի նպատակն է բացահայտել նոր փաստեր իրավիճակը բացատրելու կամ խնդիրը լուծելու համար: Հետազոտական գործունեությունը ենթադրում է քննադատական մտածելակերպ, դիրքորոշման հստակ արտահայտում, խստապահանջություն և ինքնատիպություն: Ավելին, արդյունավետ հետազոտության անբաժան մաս են կազմում առաջացած նոր գաղափարները, հասկացությունները, ինչպես նաև սեփական դիրքորոշումների տարածումը համապատասխան ազգային և միջազգային մակարդակներում:

ՀԳՊԱ-ում հետազոտությունն ընդգրկում է նաև գիտելիքի փոխանակում, դասավանդման հետ կապի ամրապնդում և համագործակցություն պետական և մասնավոր սեկտորի գործընկերների հետ՝ տրամադրելով մասնագիտական գիտելիքներ, հմտություններ և փորձառություն: Վերջինս կնպաստի արվեստի ոլորտում նորարարությունների ստեղծմանը, ինչպես նաև մտավոր սեփականության ձևավորմանը:

Այսպիսով, ՀԳՊԱ-ն հավաստում է, որ հետազոտական գործունեությունը ներառում է պրակտիկ գործընթացների ամբողջություն, աշխատանք տարատեսակ նյութերի հետ, քննադատական մտածողություն և ստեղծագործ մտքի զարգացում:

ՀԳՊԱ-ն անվերապահորեն խրախուսում է հետազոտությունն իրականացնելիս բարեվարքության և էթիկայի բոլոր կանոնների պահպանումը, որոնք սահմանված են բուհի բարեվարքության կանոնակարգերով և իրավական այլ փաստաթղթերով:

ՀԳՊԱ-ն խստագույնս հետևում է հետազոտությունների իրականացման և ներկայացման թույլատրելի պահանջներին՝ հետազոտական աշխատանքներում բացառելով գրագողության ցանկացած դրսևորում: Գրագողությունը սահմանվում է որպես՝

- գիտական աշխատություններից՝ գիրք, հոդված և այլն, մի քանի բառի փոփոխությամբ կամ որոշ և/կամ ամբողջական հատվածների բառացի մեջբերում առանց պատշաճ հղման,
- որևէ հայտնի հեղինակի ստեղծագործական աշխատանքի (օրինակ՝ նկար, գրաֆիկական աշխատանք և այլն) ամբողջական կամ մի քանի հատվածի կրկնօրինակում:

Գրագողության ցանկացած դեպք կամ դրսևորում պատժելի է և կանոնակարգվում է **ՀԳՊԱ-ի ակադեմիական ազնվության քաղաքականությամբ**:

ՀԳՊԱ-ն հետազոտության ռազմավարությամբ հավաստում է նաև հավասար պայմանների ու պատշաճ հետազոտական միջավայրի ստեղծումն ու պահպանումը՝ խրախուսելով ներառական մոտեցումների կիրառումը դասավանդման ընթացքում և հետազոտություն իրականացնելիս:

Մույն փաստաթուղթը ներակայացնում է՝

- ✚ Հետազոտության համատեքստը
- ✚ Հետազոտության առաջնահերթությունները
- ✚ Հետազոտական միջավայրը
- ✚ Հետազոտության ռազմավարության մշտադիտարկումն ու բարելավումը

ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՄՍԸ

Սույն փաստաթուղթը ներկայացնում է արվեստաբանության, կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտներում Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի (ՀԳՊԱ) մոտեցումները և պատկերացումները հետազոտության զարգացման նկատմամբ: Կարևորելով ստեղծագործական մոտեցումները և գիտական նորույթը՝ բուեր սույն ռազմավարության համատեքստում առանձնացնում է հետազոտության առաջնահերթությունները և հիմնական սկզբունքները:

ՀԳՊԱ-ն իր 2017-2021թթ. ռազմավարական ծրագրով սահմանել է հետազոտությունը՝ որպես ռազմավարական գերակա ուղղություններից՝ հիմնականում կենտրոնանալով նորույթի, նորարարական գաղափարների և ստեղծագործական մտքերի ստեղծման ու տարածման վրա: Հետևապես, ՀԳՊԱ-ում հետազոտությունը միտված անվերապահորեն արձագանքելու արվեստաբանության, կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ժամանակակից պահանջներին, ինչպես նաև արագ զարգացող արդյունաբերությանը, որոնք նպաստելու են մշակութային արժեքների և տեխնոլոգիայի զարգացմանը ազգային և միջազգային մակարդակներում: Այսպիսով, ՀԳՊԱ-ն առանձնացնում է՝

- **Գործնական-կիրառական հետազոտություն**՝ շեշտադրելով ստեղծագործական ուղղությունները՝ կերպարվեստ, դիզայն և դեկորատիվ կիրառական արվեստ: Այստեղ հետազոտության նպատակն է նյութերի և գործիքների ճանաչողության խորացումը, մասնագիտական վարպետության հղկումը, գեղարվեստական և դիզայնի արվեստի միջոցների յուրացումն ու զարգացումը, ստեղծագործական երևակայության խթանումը և այս ամենի ուսումնասիրությունը գեղարվեստական և դիզայնի արվեստի գործընթացների համատեքստում:
- **Գիտական-տեսական հետազոտություն**, որը հիմնականում վերաբերում է արվեստի և արվեստաբանության պատմության ուսումնասիրությանը: Նպատակն է ուսումնասիրել արվեստի ստեղծագործությունները և արվեստաբանական ու հումանիտար մտքի զարգացումը պատմական գործընթացում, որը ենթադրում է գեղարվեստական փաստերի, դրանց ստեղծման բովանդակային, ոճական և ձևային օրինաչափությունների, ինչպես նաև արվեստաբանական դպրոցների, դրանց փոխառնչությունների և արվեստային գործընթացում դրանց ներդրման հետազոտությանը՝ ըստ դարաշրջանների, քաղաքակրթական-մշակութային միավորների, անհատ արվեստագետների ու արվեստաբանների: Կարևորվում է հայ արվեստի և արվեստաբանության ուսումնասիրությունը՝ դիտարկելով այն տարածաշրջանային և համաշխարհային արվեստի ու մշակույթի համատեքստում:

2019-2022թթ. հետազոտության ռազմավարությունը առանձնացնում է հետևյալ **խնդիրները**՝

- ✦ ամրապնդել ՀԳՊԱ-ի դերը՝ նպաստելով արվեստի պատմության և տեսության, կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտների հետազոտության զարգացմանը՝ իրականացնելով արդյունավետ հետազոտություն, որի արդյունքները շոշափելի և տեսանելի կլինեն առնվազն ազգային մակարդակում,
- ✦ խթանել դասախոսական կազմի հետազոտական գործունեությունը՝ աջակցելով նրանց մասնագիտական կարողությունների զարգացմանը,
- ✦ ներգրավել ավելի մեծ թվով երիտասարդ հետազոտողներ՝ նպաստելով նրանց մասնագիտական ու գիտական աճին,

- ✦ նպաստել հետազոտական միջավայրի ստեղծմանն ու զարգացմանը՝ ապահովելով նպաստավոր ու հավասար պայմաններ ու ռեսուրսներ հետազոտողների ակտիվ գործունեության համար,
- ✦ ապահովել գիտական զանգվածի ձևավորումը՝ հնարավորություններ ստեղծելով միջոլորտային հետազոտությունների իրականացման համար,
- ✦ նպաստել հետազոտության համար ֆինանսական միջոցների մեծացմանը և արտաքին աղբյուրներից ֆինանսների հայթայթմանը,
- ✦ խթանել հետազոտության միջազգայնացումը և ռազմավարական նշանակության համագործակցության ամրապնդումը հետազոտության մշակույթի տարածման նպատակով:

Հետազոտության ռազմավարական խնդիրները



Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները՝ ՀԳՊԱ-ն սահմանում է հետազոտության իր առաջնահերթությունները, որոնք արտաքին և ներքին շահակիցների հետ քննարկումների արդյունք են և արտացոլում են նաև նրանց տեսակետերը: Համախմբելով դիրքորոշումները սույն ռազմավարությամբ առանձնացվել են հետազոտության առաջնահերթությունները և թեմատիկ ուղղությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԳՊԱ-ն մշակել է հետազոտության առաջնահերթությունները՝ յուրաքանչյուր ոլորտի համար առանձնացնելով թեմատիկ ուղղությունները:

Արվեստաբանություն

Առաջնահերթություն է համարվում միջոլորտային հետազոտությունների խրախուսումը՝ պատմության, բանասիրության, ճարտարապետության, հնագիտության, դիզայնի, կերպարվեստի, գեղագիտության և փիլիսոփայության գիտակարգերի հետ առնչության շրջանակներում՝ հետևյալ թեմատիկ ուղղություններով.

1. Վաղքրիստոնեական և միջնադարյան շրջանների հայ արվեստի ուսումնասիրությունը՝ արևելաքրիստոնեական մշակույթի, կովկասագիտության և բյուզանդագիտության համատեքստում՝ ընդհանրությունների և առանձնահատկությունների վերհամամար, որ թույլ կտա առավել հիմնավոր կերպով մեկնաբանել և արժևորել հայ արվեստը (*մասնավորապես խրախուսվում է «Երուսաղեմյան սրբազան ավանդույթի ազդեցությունը հայ միջնադարյան արվեստի, աստվածաբանության և մշակույթի վրա» թեման*)
2. Հայ արվեստաբանության պատմության ուսումնասիրություն , որ գրեթե չհետազոտված ոլորտ է և թույլ կտա հարստացնել և ամբողջացնել գիտելիքները հայ արվեստագիտական մտքի, դպրոցի, խորհրդային և միջազգային գիտական բանավեճերի բովում հայ մասնագետների տեսակետների ու դիրքորոշումների մասին:
3. Հայ ժամանակակից արվեստի ուսումնասիրություն (80-ականներ, հետանկախության շրջան), որ կրկին քիչ հետազոտվող բնագավառ է և մեծ պոտենցիալ է պարունակում՝ հատկապես մասնագիտական մրցունակության ապահովման և միջազգայնացման տեսանկյունից:
4. Կանանց դերն ու գործունեությունը արվեստի և մշակույթի զարգացման մեջ. Պատմություն և ներկա ժամանակ:
5. Մինթետիկ արվեստների զարգացման միտումները հայ իրականության մեջ:

Կերպարվեստ (գեղանկարչություն, քանդակագործություն, գրաֆիկա)

1. Ավանդույթը արդիականության մեջ և արդիականը ավանդույթում. գեղանկարչական ազգային ավանդույթի և արվեստի ժամանակակից տենդենցների հարաբերությունը՝ ինչպես հորինվածքային և կատարողական տեխնիկայի, այնպես էլ գաղափարային բովանդակության համատեքստում:
2. Քաղաքային թեմատիկա. «Քաղաք և քաղաքային մշակույթ» ծրագիր:
3. Գեղանկարի և քանդակի համադրման տեխնիկաներ և տեխնոլոգիաներ:
4. Գրաֆիկական լուծումներ թվային արվեստում. ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը և պոտենցիալ հնարավորությունները գրաֆիկայում:
5. Նորարարական կոնցեպտներ և գեղարվեստական լուծումներ՝ գրքի նկարազարդման ոլորտում:
6. Նորարարական-փորձարարական և դասական տեխնոլոգիաների համադրում տպագրական գրաֆիկայում:
7. Հորինվածքի տեսություն. դասականից դեպի ժամանակակից միտումներ:

Դիզայն և կիրառական արվեստ.

1. Համացանցային կայքերի դիզայն. Գեղարվեստական մտածողություն և թվային հնարավորություններ
2. Հաղորդակցության ժամանակակից միջոցների գեղարվեստական կոնցեպտուալացում

3. Ժամանցային - տեղեկատվական հավելված ծրագրերի գեղարվեստական ձևավորման խնդիրները
4. Հայկական նորաձևության միտումները միջազգային համատեքստում . ազգային ավանդույթի և արդիականության փոխհարաբերությունը
5. Խեցեգործությունը ներքին և արտաքին հասարակական միջավայրում
6. Խեցեգործության կիրառումը արտթերապիայում

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Հետազոտության արդյունավետ իրականացման առաջնային պայմաններից է հետազոտական առողջ միջավայրի ստեղծումն ու պահպանումը: ՀԳՊԱ-ն հատուկ ուշադրություն է դարձնում բուհում հետազոտություններ կատարելիս պատշաճ միջավայրի, ռեսուրսների և հավասար պայմանների ապահովմանը՝ երաշխավորելով զանազանությունը: Համապատասխան ռեսուրսների (ֆինանսական և նյութական) և անհրաժեշտ մասնագիտական կարողություններով օժտված անձնակազմի ներգրավումը գործընթացում հետազոտության մշակույթի ձևավորման և տարածման լավագույն գրավականներից է, ինչը և որդեգրել է ՀԳՊԱ-ն իր գործունեությունը ծավալելիս:

Ռեսուրսներ

Իր գործունեության վերջին տարիներին ՀԳՊԱ-ն ակնառու առաջընթաց է գրանցել հետազոտության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ուղղությամբ: Համաձայն որդեգրած առաքելության և ռազմավարության՝ ՀԳՊԱ-ն շարունակելու է ապահովել անհրաժեշտ նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների զարգացումը՝ նպաստելով հետազոտությունների որակին և արդյունավետ իրականացմանը:

Նյութական ռեսուրսներ

Աշխատանքային տարածք, գործիքներ և լաբորատորիաներ	Գրադարանից և այլ պահոցներից օգտվելու հնարավորություն	Գիտական, ստեղծագործական, թանգարանային և գրադարանային այլ հիմնարկներից օգտվելու հնարավորություն
Հանձնարարական նամակներ և երաշխավորագրեր	Տեղական և միջազգային գիտական գրախոսվող ամսագրերում հրապարակվելու հնարավորություն և աջակցություն	Տեղական և միջազգային գիտաժողովների, կոնֆերանսների մասնակցելու օժանդակություն


Անձնակազմ

ՀԳՊԱ-ն պարտավորություն է վերցնել համալրելու անձնակազմը անհրաժեշտ որակներ ունեցող մասնագետներով, պրոֆեսորադասախոսական կազմով և դեկավարներով, որոնք իրենց մեծ դերն ու ներդրումը կունենան երիտասարդ հետազոտողների մասնագիտական աճի, հետազոտական գործունեության զարգացման մեջ՝ ապահովելով հետազոտողների և դասախոսների հետագա սերնդի ձևավորումը: Այս նպատակով բուհը կենտրոնացրել է մարդկային ռեսուրսներ, որոնք համակարգում, իրականացնում և վերահսկում են հետազոտության ողջ գործընթացը՝ ապահովելով զարգացում ու շարունակականություն:

ՀԳՊԱ-ն շարունակաբար նպաստելու է պրոֆեսորադասախոսական կազմի և դեկավարների մասնագիտական աճին՝ կարողությունների զարգացման միջոցառումներ կազմակերպելու, նրանց հետազոտական հետաքրքրությունները հետազոտական թեմատիկ ուղղությունների հետ կապերի ստեղծման և գիտական առաջընթացին աջակցելու միջոցով:

ՀԳՊԱ-ն ապահովելու է անձնակազմի անհատական և գործունեության առաջընթացի մշտադիտարկման գործընթացը՝ հետագա աջակցության և բարելավման նպատակներով:

Հետազոտության գործընթացում ներգրավված մարմինները



Ֆինանսական ռեսուրսներ

ՀԳՊԱ-ն երաշխավորում է ֆինանսական ռեսուրսների բաշխումը հետազոտության և հետազոտողի կրթական ծրագրի իրականացման և շարունակականության ապահովման համար՝ բուհի բյուջեով սահմանելով ֆինանսավորման չափը:

ՀԳՊԱ-ն պարտավորվում է նաև ստեղծել նպաստավոր պայմաններ ֆինանսական հոսքերի մեծացման և արտաքին աղբյուրների հայթայթման ուղղությամբ: Այդ նպատակով ՀԳՊԱ-ն խրախուսում է բուհի, անձնակազմի և հետազոտողների ակտիվ ներգրավածությունը ազգային և միջազգային դրամաշնորհներում՝ հետազոտական նոր գաղափարների զարգացման և ֆինանսական միջոցների ձեռքբերման ու ռեսուրսների բարելավման նպատակով:

Հետազոտության մշակույթ

Դասավանդումն ու ուսումնառությունը, ինչպես նաև հետազոտությունն ՀԳՊԱ-ի գործունեության առանցքային ուղղություններից են, որոնց արդյունավետությունից է կախված բուհի հաջողությունը և հեղինակությունը:

ՀԳՊԱ-ն շարունակելու է զարգացնել ու բարելավել այն վարչական օղակների և ինստիտուցիոնալ կարողությունների գործունեությունը, որոնք ուղղակիորեն նպաստում են բուհի հետազոտության ռազմավարական նպատակների իրականացմանը:

ՀԳՊԱ-ն պատասխանատվություն է կրում ներդնել և գործարկել հետազոտության համակարգման արդյունավետ իրականացման գործընթացներ, ինչպես նաև մշտադիտարկման և բարելավման մեխանիզմներ, որոնք նպաստելու են բուհի դերի ամրապնդմանը արվեստաբության, կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի հետազոտության ոլորտներում:

ՀԳՊԱ-ն ապահովելու է հետազոտության և հետազոտական կրթական ծրագրի կապը բուհի ռազմավարական նպատակներին՝ երաշխավորելով նաև հետազոտության կապը դասավանդման հետ:

ՀԳՊԱ-ն շարունակելու է որոնել և նոր համագործակցության հարթակներ ստեղծել ոլորտի առաջատար ուսումնական հաստատությունների, մասնավոր սեկտորի հետ՝ համատեղ հետազոտությունների միջոցով ապահովելով ոլորտի զարգացումը երկրում և երկրից դուրս, ինչպես նաև խթանելով արվեստի, տեխնոլոգիայի և արդյունաբերության զարգացումը:

ՀԳՊԱ-ն անվերապահորեն հետևելու է, որ հետազոտությունը շարունակի իր ուրույն տեղն ու դերը ունենալ բուհի տեսլականում, առաքելության մեջ և սահմանված արժեքներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

ՀԳՊԱ-ի բոլոր գործընթացների, այդ թվում նաև հետազոտության արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիքներից է բուհի որդեգրած որակի կառավարման համակարգը, որի գործարկման միջոցով էլ գնահատվում է հետազոտության կառավարման և համակարգման, հետազոտողի կրթական ծրագրի կատարողականը:

ՀԳՊԱ-ն կարևորում է որակի կառավարման համակարգի շարունակական գործարկումը բուհի հետազոտության ոլորտի համար՝ առանձնացնելով որակի ապահովման մեխանիզմներ ու գործիքներ՝ ուղղված հետազոտության նպատակների իրականացման և կատարողակի ցուցիչների մշտադիտարկմանը: Մշակված մեխանիզմների և գործիքների արդյունավետ կիրառումը կնպաստի ոլորտի կարգավորող փաստաթղթերի, գործընթացի և կրթական ծրագրի հետագա բարելավումներին:

ՀԳՊԱ-ն հատուկ ուշադրություն է նաև դարձնում հետազոտության ռազմավարության և հատկապես առաջնահերթությունների, խնդիրների ձևակերպման, կրթական ծրագրի մշակման և ուսումնառության վերջնարդյունքների սահմանման գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների արձագանքը՝ խրախուսելով նրանց անմիջական ներագրավումը: Վերջիններից ստացված առաջարկությունների ու մեկնաբանությունների վերլուծությունը նպաստելու է նշված գործընթացների բարելավմանը և հետազոտության զարգացմանը:



ՀԱՎԵԼՎԱԾ 1: ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԼԱՆԸ 2019-2022թթ.

Իրականացման մոտեցումներ

- Դասախոսական կազմի ընտրության հարցում հետազոտական գործունեության կարևորում:
- Դասախոսների հետազոտական աշխատանքների համակարգում, նրանց հետազոտական գործունեությանը աջակցում:
- Գիտական հետազոտությունների միջազգայնացմանը միտված նոր քաղաքականության մշակում:
- Արդի պահանջներին համապատասխան հետազոտողի կրթական ծրագրի վերանայում:
- Կրթական ծրագրի հետազոտության բաղադրիչի զարգացումը, հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավածության խթանում:
- Հետազոտության և դասավանդման փոխկապակցման հստակ մեխանիզմների մշակում:
- Արտաքին գործընկերների հետ համագործակցության զարգացում:
- Իրականացվող հետազոտությունների արդյունքների տարածում:

Կատարողականի ցուցիչ	Նպատակը հասնելու ռազմավարական ծրագրի ավարտին
Գիտական և գիտամեթոդական հրատարակությունների տարեկան միջին թիվը:	100
Միջազգային ամսագրերում հրատարակությունների տարեկան միջին թիվը:	10
Գիտական կոչում և աստիճան ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի տոկոսը:	85%
Հետազոտությանը հատկացվող միջին տարեկան բյուջեն:	8.000.000 ՀՀ դրամ
Իրականացվող հետազոտական ծրագրերի թիվը:	4
Հետազոտական կոնֆերանսների և քննարկումների տարեկան միջին թիվը:	22

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ
2019-2022թթ.**

	Գործողություն	Հաջողության ցուցիչ /measure of success/	Պատասխանատու	Ստուգող մարմին	Վերջնական			
					2019	2020	2021	2022
1	Դասախոսների հետազոտական գործունեության խթանման և աջակցության մեխանիզմների մշակում, կիրառում և վերանայում	Մեխանիզմներ	Հետազոտական կենտրոնի տնօրեն	Ուս.-գիտ. գծով պրոռեկտոր				
2	Հետազոտությունների միջազգայնացման քաղաքականության և մեխանիզմների մշակում ու բարելավում	Քաղաքականություն և մեխանիզմներ	Հետազոտական կենտրոնի տնօրեն	Ուս.-գիտ. գծով պրոռեկտոր				
3	Հետազոտողի կրթական ծրագրի բարելավում	Վերանայված ծրագիր, ուսանողների դրական արձագանք	Հետազոտական կենտրոնի տնօրեն	Ուս.-գիտ. գծով պրոռեկտոր, ՈԱ կենտրոն				
4	Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչի զարգացում	Հստակ սահմանված պահանջներ և դրանց գնահատման մեխանիզմներ	Ամբիոնների վարիչներ	Ուս.-գիտ. գծով պրոռեկտոր				
5	Դասավանդման և հետազոտության վեբլոկայնացման մեխանիզմների մշակում	Մեխանիզմներ	Ամբիոնների վարիչներ	Ուս.-գիտ. գծով պրոռեկտոր				
6	Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավման մեխանիզմների մշակում և կիրառում	Մեխանիզմներ, ներգրավված ուսանողների դինամիկա	Հետազոտական կենտրոնի տնօրեն	Ուս.-գիտ. գծով պրոռեկտոր				
7	Հետազոտական աշխատանքների արդյունքների լուսաբանում	Հաշվետվություններ, արդյունքների հրատարակումներ	Հետազոտական կենտրոնի տնօրեն, ամբիոնների վարիչներ	Ուս.-գիտ. գծով պրոռեկտոր				
8	Հետազոտության դրամաշնորհային ծրագրերի հայթայթում	Դրամաշնորհային ծրագրեր	Հետազոտական կենտրոնի տնօրեն	Ուս.-գիտ. գծով պրոռեկտոր				

ՀԱՎԵԼՎԱԾ 3: ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

	<p>Արտաքին հնարավորություններ</p> <p>(Հ)</p> <p>1. Մասնագիտական ներքին խորհրդի ձևավորում:</p> <p>2. Նոր կրթական ծրագրի հաստատում ԲՈԿ-ի կողմից:</p> <p>3. Համատեղ հետազոտությունների իրականացում և աստիճանաշնորհում</p> <p>4. Արտաքին ֆինանսների ներգրավման հնարավորություններ:</p> <p>5. Որակի արտաքին գնահատման հնարավորություն և բարելավման ուղիների վերաբերյալ արձագանքի ստացում:</p>	<p>Արտաքին վտանգներ</p> <p>(Վ)</p> <p>1. Նոր ծրագրի մերժում:</p> <p>2. Օրենսդրական դաշտի փոփոխություններ:</p> <p>3. Արտաքին մասնագիտական խորհրդում բուհի կողմից առաջարկած մասնագիտությունների /Դեկորատիվ կիրառական արվեստ, դիզայն, Հագուստի մոդելավորում և այլն/ ուղղությամբ մասնագետների պակաս:</p>
--	---	---

Ներքին ուժեղ կողմեր	Ու-Հ	Ու-Վ
<p>(Ու)</p> <p>1. Հետազոտությունը ընդգրկված է բուհի 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում և համարվում է բուհի ռազմավարական առաջնահերթություններից մեկը:</p> <p>2. Բուհում առկա է հետազոտության ոլորտը համակարգող առանձին կառույց՝ Հետազոտական կենտրոն:</p> <p>3. Գործող ծրագրի հիման վրա մշակվել է նոր կրթական ծրագիր՝ սահմանված ուսումնառության վերջնաքայլունքներով:</p> <p>4. Առկա է համապատասխան հետազոտական միջավայր հետազոտություն իրականացնելու համար:</p> <p>5. Առկա են համապատասխան քանակի և որակի մարդկային ռեսուրսներ:</p> <p>6. Գործում է հետազոտության ոլորտը ներառող որակի կառավարման համակարգ:</p>	<p>1. Հետազոտության ռազմավարության մշակում և իրականացում:</p> <p>2. Նոր կրթական ծրագրի գործարկում:</p> <p>3. Նոր համագործակցությունների ընդլայնում բուհերի և գիտական այլ հաստատությունների հետ:</p> <p>4. Հետազոտական միջավայրի բարելավում /նոր ռեսուրսների համալրում՝ ներառյալ մարդկային և նյութական/:</p> <p>5. Հետազոտության ոլորտի որակի քաղաքականության մշակում և գործարկում:</p>	<p>1. Հետազոտողի նոր կրթական ծրագրի ընդունման հիմնավորում:</p> <p>2. Հիմնավորումներ և վերանայումներ առաջարկվող կրթական նոր ծրագրում՝ կախված օրենսդրական դաշտի փոփոխություններից:</p>

Ներքին թույլ կողմեր	Թ-Հ	Թ-Վ
<p>(Թ)</p> <p>1. Գործող կրթական ծրագիրը չունի վերջնարդյունքներ և չի արտահայտում արվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ոլորտի առանձնահատկությունները:</p> <p>2. Հետազոտության ոլորտի առաջնահերթությունները սահմանված չեն գործող փաստաթղթերում:</p> <p>3. Հետազոտության և դասավանդման փոխկապակցումը թույլ է:</p> <p>4. Ղեկավարների և հետազոտող ուսանողների խրախուսման միջոցները բավարար չեն:</p> <p>5. Ներքին հետազոտությունների բացակայություն:</p> <p>6. Ֆինանսական ոչ բավարար միջոցների հատկացում հետազոտության ոլորտի զարգացմանը:</p>	<p>1. Կրթական նոր ծրագրի ամբողջական իրականացում:</p> <p>2. Ֆինանսական միջոցների օպտիմալ բաշխում:</p> <p>3. Եռակողմ պայմանագրի գործարկում:</p>	<p>1. Հետազոտության նոր ռազմավարական ծրագրի կիրառում ըստ գործողությունների պլանի:</p> <p>2. Որակի ապահովման մեխանիզմների արդյունավետ կիրառում և բարելավման ուղիների առաջարկում:</p> <p>3. Ներքին հետազոտությունների իրականացման համար խրախուսման մեխանիզմների մշակում և կիրառում:</p> <p>4. Դասավանդման և հետազոտության կապի ուժեղացման ուղղությամբ մեխանիզմների մշակում և կիրառում:</p>

ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ: ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում հետազոտության ոլորտը համակարգող հիմնական մարմինը Հետազոտական կենտրոնն է, որը առանձին կառուցվածքային միավոր է և պատասխանատու է ՀԳՊԱ-ում հետազոտական գործունեությանն օժանդակելու և զարգացմանը նպաստելու համար:

Հետազոտական կենտրոնը ձևավորվել է 2014թ., որի գործունեության շրջանակը և պարտականությունները հստակեցվել են ՏԵՄՊՈՒՄ «Զալցբուրգի սկզբունքների հիման վրա հետբուհական կրթության կառուցվածքային զարգացում» (ՎԵՐԻՏԱՄ) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հայաստանյան և եվրոպական գործընկեր հաստատությունների և կազմակերպությունների համատեղ գործունեության արդյունքում:

Հետազոտական կենտրոնը սահմանել է հետևյալ հիմնական **նպատակները՝**

- ⇒ նպաստել բուհում հետազոտական գործունեության առաջընթացին՝ ապահովելով բուհի և հետազոտության ռազմավարության նպատակների իրականացումը,
- ⇒ ապահովել հավասար պայմաններ և միջավայր պրոֆեսորադասախոսական կազմի և հետազոտող-ուսանողների հետազոտական աշխատանքների ծավալման համար,
- ⇒ ապահովել հետազոտության և դասավանդման փոխկապակցվածությունը՝ ներմուծելով հետազոտության բաղադրիչը կրթության տարբեր մակարդակներում,
- ⇒ նպաստել հետազոտության միջազգայնացմանը՝ համագործակցության հարթակներ ստեղծելով ոլորտում հետազոտություն իրականացնող առաջատար հաստատությունների և կազմակերպությունների հետ, խթանելով հետազոտական աշխատանքների ու ծրագրերի շրջանակներում շարժունությունը,
- ⇒ նպաստել բուհում հետազոտության մշակույթի տարածմանը՝ ապահովելով որակի ներքին համակարգի մեխանիզմների ներդրումը և իրականացումը:

Հետազոտական կենտրոնի աշխատանքները համակարգում են **կենտրոնի ղեկավարն ու կենտրոնի մասնագետը**, որոնցից յուրաքանչյուրն ունի սահմանված հետևյալ գործառույթները՝

Հետազոտական կենտրոնի ղեկավարի պարտականությունները՝

- ◆ Պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական աշխատանքի համակարգում, վերահսկում:
- ◆ ՀԳՊԱ «Տարեգիրք» գիտական ամսագրի խմբագրում և հրատարակման ապահովում:
- ◆ Հանրապետական և միջազգային գիտաժողովներին, արվեստի հետազոտությանը նվիրված այլ միջոցառումներին մասնակցության կազմակերպում:
- ◆ Արվեստաբանության, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտներում հետազոտական, նորարարական ծրագրերի և նախագծերի մշակում ու համակարգում:
- ◆ Հետազոտական ծրագրերի իրականացման նպատակով տեղական և միջազգային ֆինանսավորման աղբյուրների որոնում:
- ◆ Հետազոտողի կրթական ծրագրի և կրթական գործընթացի համակարգում և վերահսկում, հետազոտողի կրթական ծրագրի արդիականության ապահովում:

Հետազոտական կենտրոնի մասնագետի պարտականությունները՝

- ◆ Մագիստրոսական և թեկնածուական թեզերի պատրաստման խորհրդատվություն:
- ◆ Ասպիրանտների և հայցորդների ընդունելության կազմակերպում:
- ◆ Ասպիրանտների ուսումնական և նախապաշտպանության հետ կապված գործընթացների պլանավորում և կազմակերպում:
- ◆ Ռեկտորատի նիստերի արձանագրում և ընդունված որոշումների մասին տեղեկատվության տարածում ստորաբաժանումների շրջանում:
- ◆ Գիտական խորհրդի քարտուղարի լիազորությունների իրականացում:

Հետազոտական կենտրոնը հաշվետու է ՀԳՊԱ-ի ուսումնագիտական գծով պրոռեկտորին: